# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
# «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

31-ը հունվարի 2023թ.
ժամը $11^{30}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,

ՀՀ ԶՈւ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժնի պետ, գնդապետ Գ. Թովմասյան,

ՀՀ ԶՈւ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժնի ավագ սպա, մայոր Մ. Երամյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ն. Թադևոսյան:

***«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ն. Թադևոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ն. Թադևոսյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Նարինե Կիրակոսյան Դավթի» ԱՁ |
| 2 | «ԻՓԻԷՍ» ՍՊԸ |
| 3 | «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ |
| 4 | «ԲԱՐԿ» ՍՊԸ |
| 5 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ |
| 6 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ |
| 7 | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ն. Թադևոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ՝

-«ԲԱՐԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 2-ում 1-ից 8-րդ չափաբաժինների գնային առաջարկների տառերով ներկայացված ընդհանուր գները չեն համապատասխանում գների բաղադրիչների գումարներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԲԱՐԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

- «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրերում նշված են *«Մազափնջերը պետք է պատրաստված լինեն պոլիէթիլենից, կամ համարժեք նյութից»* և *«Արտաքին տեսքը՝ համաձայն նկարի կամ համարժեք»*: Անհրաժեշտ է հստակեցնել 1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը՝ «կամ համարժեք նյութից» և «կամ համարժեք» բառերը:

- «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են Հավելված N 1-ը (դիմում հայտարարություն), իսկ եթե հավելված 1-ում իրական շահառուի վերաբերյալ տեղեկությունները կայքէջի հղումով չէ նաև Հավելված N 1.3-ը (իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը), Հավելված N 1.1-ը (ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը) և եթե Լաուրա Վարդանյանը չի հանդիսանում «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի տնօրեն, ապա անհրաժեշտ է ներկայացնել տնօրենի կողմից Լաուրա Վարդանյանին տրված լիազորագիրը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու իրավասության վերաբերյալ (քանի որ ներկայացված փաստաթղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրել է Լաուրա Վարդանյանը):

- «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրերում նշված են «Մազափնջերը պետք է պատրաստված լինեն պոլիէթիլենից, կամ համարժեք նյութից» և «Արտաքին տեսքը՝ համաձայն նկարի կամ համարժեք»: Անհրաժեշտ է հստակեցնել 1-ին չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը՝ «կամ համարժեք նյութից» և «կամ համարժեք» բառերը: Ինչպես նաև «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում նշված ծածկագիրը չի համապատասխանում վերոնշյալ ընթացակարգի ծածկագրին և ներկայացված հայտի Հավելվածների էլեկտրոնային թվային ստորագրությունն ակտիվ չէ, անհրաժեշտ է վերոնշյալ հավելվածները հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված Հավելվածները էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է Գուրգեն Խաչատրյանը, սակայն Փրիթի Ուեյ ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում Հասմիկ Գրիգորյանը: Հայտում բացակայում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Գուրգեն Խաչատրյանի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ տնօրենի կողմից տրված լիազորագիրը: Ուստի անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ լիազորագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը 31.01.2023թ. գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակները:

«ԼԵՈ Ա» ՍՊԸ-ն Հավելված N 1.1-ում (ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագրում) ներկայացրել է ոչ միայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, այլ նաև 5-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը: Գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան գնահատեց մասնակցի հայտը միայն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, քանի որ Հավելված 1-ում (դիմում հայտարարություն) ներկայացված են միայն այդ չափաբաժինները, ուստի մնացած չափաբաժինները գնահատող հանձնաժողովի կողմից չդիտարկվեցին: Իսկ Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում ապրանքը նկարագրելիս «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ն կիրառել է «կամ համարժեք» բառը, որը տալիս է այլընտրանքային մեկնաբանության հնարավորություն, հաշվի առնելով որ տեխնիկական բնութագրի վերաբերյալ հանձնաժողովի կողմից մեկ անգամ արդեն իսկ տրվել է շտկման հնարավորություն, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը որոշեց մերժել «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ն. Թադևոսյան)

Ի գիտություն հայտերի ամփոփման նիստը շարունակվեց 09.02.2023թ. ժամը 10:30-ին և նիստին բացակայում էր ՀՀ ԶՈւ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքլվացարարային ապահովման բաժնի ավագ սպա, մայոր Մ. Երամյանը:

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 6 մասնակից.

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | Ընտրված կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Ատամի խոզանակ /ատամի խոզանակ/ | հատ | 10 000 | 1 380 000 | «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ | 915 833.33 | 1 099 000 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 1 125 000 | 1 350 000 |
| | | | | | | | | «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ | 915 833.33 | 1 099 000 |
| 2 | Ածելիներ /սափրող սարք/ | հատ | 50 000 | 2 750 000 | «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ | 1 870 833.33 | 2 245 000 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 2 125 000 | 2 550 000 |
| | | | | | | | | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 237 500 | 2 685 000 |
| | | | | | | | | «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ | 1 870 833.33 | 2 245 000 |
| 3 | Լվացքի պայուսակներ /պարկ լվացքի համար/ | հատ | 10 000 | 3 000 000 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 325 000 | 2 790 000 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 325 000 | 2 790 000 |
| 4 | Խոզանակ, կոշիկի /խոզանակ՝ կոշիկի/ | հատ | 4 000 | 3 360 000 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 741 666.67 | 3 290 000 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 741 666.67 | 3 290 000 |
| | | | | | | | | «ԻՓԻԷՍ» ՍՊԸ | 2 783 000 | 3 339 600 |
| 5 | Մկրատ վարսավիրի /մկրատ վարսավիրի/ | հատ | 250 | 148 500 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 122 500 | 147 000 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 122 500 | 147 000 |
| 6 | Մազ կտրելու սարքեր /մազ կտրելու մեքենա էլեկտրական/ | հատ | 500 | 1 980 000 | «Նարինե Կիրակոսյան Դավթի» ԱՁ | 1 491 340 | 1 789 608 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 1 625 000 | 1 950 000 |
| | | | | | | | | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 1 624 166.67 | 1 949 000 |
| | | | | | | | | «Նարինե Կիրակոսյան Դավթի» ԱՁ | 1 491 340 | 1 789 608 |
| 7 | Էլեկտրական արդուկներ /արդուկ՝ էլեկտրական, կենցաղային/ | հատ | 500 | 3 450 000 | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 741 666.67 | 3 290 000 | «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ | 2 850 000 | 3 420 000 |
| | | | | | | | | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 2 792 000 | 3 350 400 |
| | | | | | | | | «ԼԵՈ Ա» ՍՊԸ | 2 741 666.67 | 3 290 000 |
| | | | | | | | | «Նարինե Կիրակոսյան Դավթի» ԱՁ | 2 825 000 | 3 390 000 |
| 8 | Ներկ, ջրաէմուլսիոն, ակրիլ /ներկ դրոշմավորման համար/ | կգ | 60 | 348 000 | | | | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 8-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին**

---

(Ն.Թադևոսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը 10.02.2023թ.-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1. «Բրենդս Քոննեկտ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
2. «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով,
3. «ՀՈՎ-ԱՐՍ» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի մասով,
4. «Նարինե Կիրակոսյան Դավթի» ԱՁ-ին 6-րդ չափաբաժնի մասով:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

---

(Ն.Թադևոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Գ. Ուստյան |
| **Գնահատող** | Գ. Թովմասյան |
| **Գնահատող** | Մ. Երամյան |
| **Գնումները համակարգող՝** | Ն. Թադևոսյան |